ՆՈՐ ԳՐՔԵՐ

(ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակություն)

«ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ» — 1969 թ., տպաքանակը՝ 5000, 260 էջ։

Անմահ Կոմիտասի ծննդյան հարյուրամյակի սուրբ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը լույս է ընծայել «Կոմիտասականի» Ա հատորը, որով սկիզբ է դրվում նրա ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրապարակմանը։

Ժողովածուն բացվում է Ռոբերտ Աթայանի «Կոմիտասի երաժշտական ժառանգությունը» ընդարձակ հոդվածով, որտեղ հեղինակը մեծ երաժշտագետի ժառանգության պատմական և արդիական, գեղարվեստական ու դիտական նշանակության գնահատությունը տալուց հետո, ներկայացնում է նրա՝ պահպանված կամ մինչև այժմ հայտնաբերված երաժշտական ստեղծագործությունները և ընդգծում, որ մինչև այսօր հայտնի դարձած այդ երգերի թիվը հասնում է 200-ի, իսկ եթե նկատի առնենք նաև ինքնուրույն արժեք ներկայացնող 130-ից ավելի տարբերակները, ապա ակնհայտ կդառնա, որ այդ երգերը բավական պատկառելի թիվ են կազմում։

«Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը», այսպես է վերնագրված Գևորգ Գյոդակյանի հոդվածը, որտեղ հանգամանորեն խոսվում է Կոմիտասի նոր ոճական սկզբունքների յուրահատկությունների մասին։

Ապա տեղավորված են Ռաֆայել Ստեփանյանի «Կվինտակորդներն ու կվարտակորդները Կոմիտասի ստեղծագործության մեջ», Աննա Ամբակումյանի «Կոմիտասի դաշնամուրային պարերի մեկնաբանման հարցի շուրջը», Նիկողայոս Թահմիզյանի «Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը», Մաթևոս Մուրադյանի երկու՝ «Եկմալյանի պատարագը Կոմիտասի գնահատությամբ» և «Ազգային երաժշտական ուժերի պատրաստման կոմիտասյան ծրագրերը» հոդվածները։

Հետաքրքիր են ժողովածուի վերջում ներկայացվող, Կոմիտասի աշակերտ՝ Միհրան Թումանյանի և ֆրանսիացի հայտնի երաժշտագետ Պյեր Օբրիի հուշերը։

Հատորի խմբագիրն է արվեստագիտության թեկնածու Ռոբերտ Աթայանը։

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ — «Պետրոս Ղափանցի», 1969 թ., տպաքանակը՝ 1000, 442 էջ։

Հայ ժողովրդի պատմությունը հարուստ է ազատագրական պայքարի հերոսական դրվագներով։ *XVIII* դարն առանձնահատուկ տեղ ունի այդ առումով։ Այս դարում է ձևավորվել հայ ազգային, քաղաքական քնարերգությունը, որի ամենատաղանդավոր ներկայացուցիչը Պետրոս Ղափանցին է։ Նա կրոնա-քաղաքական, կրոնա-հայրենասիրական բանաստեղծություններից բացի ստեղծել է նաև ժողովրդա-ազատագրական գաղափարախոսությամբ տոգորված բարձրարվեստ քնարական բանաստեղծությունների մի ամբողջ շարք, որոնց ուսումնասիրությանն էլ նվիրված է բանասիրական գիտությունների թեկնածու Շուշանիկ Նազարյանի այս մենագրությունը։ Հեղինակն արժեքավորում է Ղափանցու գրական վաստա-

կը, ցույց տալիս նրա տեղը հայ քնարերգության պատմության մեջ:

Գիրքը բաղկացած է երեք մասից՝ Ուսումնասիրություն, Բնագիր և Ծանոթագրություններ: Առաջին բաժնում խոսվում է Պ. Ղափանցու կյանքի, ստեղծագործության, բանաստեղծությունների արվեստի, *XVIII* դարի գրավոր գրաբար բանաստեղծության տեսության և այլ հարցերի մասին: Բնագրերի համար հիմք է հանդիսացել Պ. Ղափանցու 1772 թ. Կոստանդնուպոլսում տպագրված «Գրքոյկ կոչեցեալ երգարան» բանաստեղծությունների ժողովածուն: Ծանոթագրություններ բաժնում նշվում են ընդօրինակված կամ տպագրված երգի աղբյուրը, ժամանակը, էջը, տարբերակները և այլն:

Գրքում ներկայացվում է նաև Պ. Ղափանցու երեք երգի մեծ հատած ձայնագրությունները, որոնք ծրատարակության է պատրաստել երաժշտագետ Ն. Թահմիզյանը:

Աշխատությունը խմբագրել են Ա. Մ. Ինճիկյանը և Օ. Ս. Եգանյանը:

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ — «Նոր Ջուղայի հայկական գաղութը XVII դարում», 1969 թ., տպաքանակը՝ 1000, 168 էջ:

Գրքում, որ լույս է տեսել ռուսերեն լեզվով, լուսաբանվում է իրանահայ գաղութի խոշորագույն գաղթօջախներից մեկի՝ Նոր Ջուղայի *XVII* դարի պատմությունը: Ցույց է տրվում, որ *XVII* դարում Իրանի արտաքին առևտրի մենաշնորհը պատկանում էր Նոր Ջուղայի հայ վաճառականներին: Դա տեղիք էր տալիս սուր պայքարի և մրցակցության հայ վաճառականների ու եվրոպական առևտրական ընկերությունների միջև, որոնք հետևողականորեն աշխատում էին Իրանը վերածել իրենց արդյունաբերական ապրանքների սպառման շուկայի և հումքի արտահանման աղբյուրի: Հայ վաճառականների պայքարը օտարերկրյա կապիտալի դեմ ունենում է այն հետևանքը, որ խափանվում են եվրոպական գաղութարարների առաջին քայլերը Իրան ներթափանցելու գործում:

Աշխատությունում քննարկվում են նաև իրանահայ վաճառականների դերը Սեֆյան պետության ու եվրոպական երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հատկապես այդ երկրների ու Իրանի միջև հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու հարցերը:

Հատուկ գլուխ է հատկացված *XVII* դարի իրանա-ռուսական առևտրական-քաղաքական կապերի պատմությանը: Այստեղ ցույց է տրվում, որ Նոր Ջուղայի վաճառականները ոչ միայն նպաստել են ռուս-իրանական տնտեսական կապերի աշխուժացմանը, այլև քաղաքական հարաբերությունների սերտացմանը: Միաժամանակ նրանք որոշակի դեր են խաղացել հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի ձևավորման գործում:

Գրքում հանգամանորեն բացահայտվում է եվրոպական կաթոլիկ միսիոներների և Վատիկանի գործունեությունը Իրանում և հատկապես Նոր Ջուղայում, որոնք իրենց «եղբայրակից-քրիստոնյաներին» հովանավորելու պատրվակի տակ աշխատում էին ապահովել եվրոպական առևտրական բուրժուազիայի շահերը Իրանում:

Կ. Ա. ԼԱԼԱՅԱՆ, Ս. Ս. ՄԱՄՅԱՆ — «Դիտավորյալ սպանություններ», 1970 թ., տպաքանակը՝ 2000, 277 էջ:

Աշխատության մեջ քրեական օրենսդրության վերլուծության և դատական պրակտիկ նյութերի ուսումնասիրության հիման վրա լուսաբանվում են դիտավորյալ սպանությունների համար քրեական պատասխանատվության հիմնական հարցերը:

Հատուկ բաժին է հատկացված պայքարի այն միջոցների ուսումնասիրմանը, որոնք ապահովում են անձի բազմակողմանի պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից: